կոտրում են շաքար, իսկ շաքարի փշրանքները թափվում են շուրջը թäֆնայի մեջ, դա շաֆարկուտուրտէլի է:

Տէփուրնէր. 40—60 սմ տրամագծով տափակ փայտե սինինէր են, որոնք ծառայում են ցորենը և առհասարակ հացահատիկը վեր թափ տալով մաքրելու համար:

Խօնչա. երկար ուղղաձիգ փայտե մատուցարան, որի վրա դարսվում են խմորի պöլինէրը՝ գնդերը հաց թխելիս:

Հատկապես ամուր փայտից է շինվում սըխտօրթակին, որը սակայն չեն ձգտում զարդարել փորագիր քանդակներով, ինչպես Լենինականի, Ախալցխայի և առհասարակ արևմտյան գավառների հայերն են սիրում:

Բազմաթիվ են փայտե աղամանները, մեկ և երկու աչքերով, կափարիչով և առանց կափարիչի:

Փայտից է հյուսնը շինում ճöiֆագնէր, բազմազան սընդուկնէր, տուփեր:

Լայն գործադրություն է գտել ծառի ճöiղը, որից շինվում են զանազան կողովներ՝ ճրվարաննէր: Ամենամեծ ճրվարանն է փրնջիկ ճրվարանը՝ ցորեն, դարի, ձավար, հաճար պահելու համար: Դա ահագին կողով է, դրսից և ներսից կավի թրէֆի և մոխրի խառնուրդ ցեխով սվաղված: Դրանք դրվում են տան մեջ մի քանի հատ: Անունը ստացել են փրնջակ բառից. փրնջակը հավասար է 10 խօրթնի՝ խուրձի:

Զանգեզուրում ֆթօց բառը գործ էր ածվում միայն փեթակի համար, այլ դեպքերում ասվում էր դրմանի ճվարան՝ հարդի ֆթօց, զիբիլի ճրվարան. թրրֆին ճրվարան: Բայց Մեղրիում գործածվում է մեծ կթօց, որին ասում էին ճö'իրղէշտ:

Կաշվե ամաննէր: Նրանցից պիտի համարել զանազան տէգէրը՝ տիկէրը և պարկերը, նաև չօբանի տոպրակը՝ ճüվգüն: Տոպրակ բառը գործ է ածվում միայն ձիուն, ջորուն դարման տալու պարկի համար:

Բրդե կամ ղազիլի՝ այծի մազի թելով գործած ամաններ են՝

Ղրլըխի. ոչխար, այծ խուզելու մկրատի աման, որը կարվում է երբեմն և կաշուց:

Ամեն տեսակի խուրջիննէր. դրանց թվում՝ թէր խուրջին—էշի կամ ձիու վրա դնելու և յէճար՝ թամբի խուրջին, թամբի վրա ձգելու համար:

Խարար. շատ խոշոր չվալ. ամբողջական կարպետից, մեջտեղից ծալած և աջ ու ձախ կողմից եզրերով իրար, ամուր կարած: Խարարը մնում է տեղում դրած, սակայն նրա տակն էլ որպես ճրվարանի տակ դրվում են փայտեր և քարեր, որ գետնից բարձր մնան և կատուն կարողանա տակով ազատ մտնել և մկներ որսալ:

Չվալը բարձրացնելու համար նրա բերանի մոտ շինում են ամուր տանգէր՝ օղակներ:

Ըղաման կամ ըղաֆսակ. փոքրիկ չվալ է նեղվզանի, նույնպես տօրֆի վրա է գործված. տանգէրի փոխարեն երկու կողմից ունի ֆօղէր, որոնցով կախվում է սյունից միջի աղը խոնավությունից պաշտպանելու համար:

Եղջյուրե ամաննէր: Զանգեզուրում եղջյուրից շինվում են միայն փոքրիկ բաժակներ՝ ծոցում պահելու համար, ճանապարհին ջուր խմելու, հիվանդի արունը ունէլու՝ քաշելու համար: Այստեղ չկան այն մեծ արծաթազարդ և ոսկեզարդ եղջյուրները, որոնք Վրաստանում սեղանի զարդ էին ծառայում, որպես գինու ղանծինէր՝ գավաթներ: Չկան նաև սապնի եղջյուրե ամանները